Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրի Մուսաբեկ փողոցի թիվ 14 հողամասում «Ռիտուալ» ՍՊԸ կողմից նախատեսված գերեզմանատան կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

03.07.2020թ. **ք.Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով, ինչպես նաև ՀՀ պարետի 2020 թվականի մայիսի 1-ի N 63 որոշման հավելված N 11-ի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ որպես ազդակիր համայնք Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում 2020 թվականի հուլիսի 1-ին, ժամը 12:00-ին տեղի ունեցավ Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրի Մուսաբեկ փողոցի թիվ 14 հողամասում «Ռիտուալ» ՍՊԸ կողմից նախատեսված գերեզմանատան կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Ռիտուալ» ՍՊԸ տնօրեն՝ Ա. Քոչարյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև այլ քաղաքացիներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապանի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի պետ՝ Ա. Համբարձումյանը: Նա ողջունեց ներկաներին, ընթերցեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2020 թվականի հունիսի 19-ի թիվ 112 համարում, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի հայտարարությունների բաժնում (www.kapan.am):

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «Ռիտուալ» ՍՊԸ տնօրեն՝ Ա. Քոչարյանին: Նա նշեց, որ որպես ձեռնարկող կողմ՝ այժմ քննարկման են ներկայացնում գերեզմանատան շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը: «Ռիտուալ» ՍՊԸ կողմից իրականացվում են աշխատանքներ՝ օրենքով սահմանված կարգով ստանալու թույլտվություն գերեզմանատան տարածքի կառուցապատման և հետագա շահագործման նպատակով: Գերեզմանատան տարածքում

չկա բուսականություն, բացի նոսր խոտածածկույթից և սակավաթիվ թփերից: Չկան գետային ցանցեր, հուշարձաններ, շինարարական կառույցներ և գտնվում է մոտակա բնակավայրից մոտ 2 կմ հեռավորության վրա: Աղտոտված ջրերի և գրունտային ջրերի հոսքեր չկան: Կենդանական և բուսական աշխարհին վտանգ չի սպառնում, իսկ օգտագործման մակերեսը կազմում է 3 հա:

Հարց (Վլադիկ Մարտիրոսյան)

Ո՞րտեղ է գտնվում տարածքը:

Պատասխան (Արման Քոչարյան)

Գտնվում է Սյունիք բնակավայրի Մուսաբեկ փողոցի թիվ 14 հասցեում՝ նախկին չումայի դիմաց, պոչամբարի հարևանությամբ:

Կարծիք (Վլադիկ Մարտիրոսյան)

Եթե կորոնավիրուսը չլիներ, հաստատ հանրային քննարկմանը ավելի շատ անձինք կմասնակցեին: Վաղուց է այդ խնդիրը առաջացել մեր քաղաքում: Բարաբաթումի գերեզմանատունը փակ է, իսկ Սյունիք բնակավայրի գերեզմանատանը արդեն գրեթե տեղ չկա: Հուղարկավորությունների ժամանակ մարդիկ մեծ խնդիրների առաջ են կանգնում: Անկեղծորեն սա շատ գովելի քայլ է: Հատկապես տարածքը այնպիսի տարածք է, որ բնապահպանական առումով ոչ մի վնաս չի հասցվում, քանզի ոչ անտառային տարածք է: Ուղղակի անօգտագործելի հողեր են: Ես կառաջարկեի, կհորդորեի «Ռիտուալ» ՍՊ ընկերությանը, որ հաշվի առնեն գերեզմանատան ճանապարհների վիճակը, չլինի նախկին գերեզմանատների պես, որտեղ մեքենայի ճանապարհ չկա: Քանի որ նոր գերեզմանատուն է, պետք է լինի գծագրերով, իրենց շարքով, մեքենայի ճանապարհով: Այնպես չլինի, որ ով որտեղից ուզենա, ինչքան ուզենա: Պետք է լինի օրինակելի գերեզմանատուն: Իսկապես շատ գովելի ծրագիր է, ինչու չէ նաև սա ժողովրդին մեծ հոգսից փրկելու միջոց է:

Լրացում (Արմենակ Սիմոնյան)

Գերեզմանատան տեղանքը բավականին հարմարավետ է նաև Կապան քաղաքի համար: Քաղաքից դուրս է, գտնվում է մի վայրում, որտեղ բուսականություն չի աճում: Այսօր ինչ ենք տեսնում, Կապան քաղաք մտնելիս գերեզմանների մոտով ենք անցնում, որը շատ տհաճ երևույթ է մեր հյուրերի համար: Այս ծրագիրը ողջունելի է, իսկ ինչ վերաբերվում է շրջակա միջավայրին, քանի որ ծուխ չի արձակվելու, գործարան չի լինելու, ինչ որ գործունեություն չի իրականացվելու, հետևապես ազդեցություն էլ չի լինի:

Կարծիք (Վլադիկ Մարտիրոսյան)

Կառաջարկեի նաև, որ ցանկապատման երկայնքով կանաչապատման, ծառատնկման աշխատանքներ իրականացվեն: Այդպիսով գերեզմանատունը մի տեսակ կկղզիանա, կսահմանազատվի:

Լրացում (Հովհաննես Գևորգյան)

Ի սկզբանե որոշվել է, որ լրիվ պետք է լինի նույն ձևի: Յուրաքանչյուր անհատական գերեզմանի ցանկապատը (12 քմ՝ 3×4 չափի) պետք է լինի միատեսակ, իսկ ներսի աշխատանքները՝ տապանաքար է, թե հուշարձան են տեղադրում, դա արդեն կորոշի անհատը: Մեկը մյուսից իր սահմաններով չպետք է տարբերվի:

Հարց (Ավետիք Համբարձումյան)

Այլ տարածաշրջանի բնակիչները կարո՞ղ են օգտվել այդ գերեզմանատնից:

Պատասխան (Հովհաննես Գևորգյան)

Իհարկե, կարող են օգտվել: Կլինեն նաև ծառայություններ, որոնցից մարդիկ կօգտվեն ըստ ցանկության: Գերեզմանոցների պահպանման, մաքրման ծառայությունները կլինեն վճարովի, սակայն ըստ ցանկության՝ ով ցանկանա:

Հարց (Վլադիկ Մարտիրոսյան)

Նախատեսվել է արդյո՞ք կառուցել այնտեղ հոգեհացի սրահ: Այդպես կլիներ կոմպլեքս:

Պատասխան (Հովհաննես Գևորգյան)

Առայժմ չի նախատեսվել:

Ամփոփում (Ավետիք Համբարձումյան)

Շնորհակալություն բոլորին մասնակցության համար: Հանրային քննարկումն ավարտվեց:

Կապան համայնքի ղեկավար **Գևորգ Փարսյան**

«Ռիտուալ» ՍՊԸ տնօրեն **Արման Քոչարյան**

Հանրային քննարկման վարող՝
Կապանի համայնքապետարանի գյուղ.
և հողօգտագործման բաժնի պետ **Ավետիք Համբարձումյան**

Արձանագրող՝ Կապանի համայնքապետարանի
գյուղ. և հողօգտ. բաժնի առաջատար մասնագետ **Արմինե Սահակյան**